



## ՃԱԲԱԹԱԹԵՐԵ

# Ազգային, Քաղաքական, Բանասիրական եւ Զուարճալիք

Ժող Տարի, թիւ 27

ՃԱԲԱԹ

10 Յունիս, 1898

**Պատմաներ.** — Ծաղիկի բաժանորդագինն է Տառեկան՝ Պոլ-  
սոյ համար 40, Գաւառներու համար 50 դահ. : Վեցամսնայ Պոլ-  
սոյ համար 25, Գաւառաց համար 30 դահ. : Համբ 30 փարայ :  
Բաժանորդագութերը թիւի վրայ է, տառեկան բաժանուղթները պի-  
տի սահան 52 եւ վեցամսնայները 26 թիւ Ծաղիկի : Պայտաշեն  
Գրասունիք յանձն կ'առնէ հասուցանել բաժանորդներուն վճառները,

երեք ծաղիկի հրատարակութիւն ու է արգելի հանդիպի :  
Ծաղիկի բաժանորդներն իրաւունք ունեն 100 այցելաց հուէր  
սահանութիւնը:

Հանցօղու նիւթերու վերաբերեալ յօդուածներ եւ բորակցու-  
թիւններ և նախակալու թեամբ կ'ընդունուի :

**ՀԱՅՑ.** — Ծաղիկի վերաբերեալ տմէն ինչ պէ՛ս է ուղղել Պաղ-  
ատիւնան Գրասունիք, կ. Պալխու, Սուլթան Համամ, թիւ 14:

## ՀՄՈՒՏ ՀԻՒԱՆԴՆԵՐԸ

Անցեալները տեղական թերթի մը մէջ կարդա-  
ցինք թէ՝ ազգերնիս ուրիշ զիտութեանց եւ արուես-  
տից մէջ ետ մեացած է, զոնէ բժշկութեան ճիւղին  
մէջ օր լսու օրէ կը յառաջադիմէ<sup>թ</sup> :

Մենք ալ կը խոստովանինք որ բժշկութիւնն  
ազգերնուս մէջ յառաջ կ'երթան, սակայն հիւանդու-  
թիւնն ալ ետ չմնար, եւ կարծենք այս օրուան օրս  
հմուտ բժիշկներէն աւելի հմուտ հիւանդներ ունինք :  
Ասոնց ալ արժանիքը չմոռնանք :

Բժիշկներն ընդհանրապէս բժշկութեան մէկ ճիւ-  
ղին մէջ աւելի յառաջ կ'երթան, օրինակի համար  
մին մարդուս փորէն քար հանելուն մէջ — օյուր  
օշմազ ջուր խմելէն ալ յառաջ կուզայ եղեր այս  
ախտը — ուրիշ մը ակռայ հանելու մէջ եւ այն,  
խկ իմ յիշած հմուտ հիւանդներս հիւանդութեան  
բոլոր ճիւղերուն մէջ յառաջ զացած են. օրինակի  
համար երիտասարդ մը կը տեսնես որ մէկ կողմէն  
ակռայ քաշել տուած ժամանակը միւս կողմէն ալ  
արիւնը մաքրելու դեղ կ'առնէ : Միւս կողմէն ու-  
քերը տաք ջուրը դրած է, մէկ կողմէն կը հազայ եւ  
միւս կողմէն կռնակը տոքուկ կը փակցունէ : Ահաւա-  
սիկ հիւանդ մը որ բաւական հմուտ է :

Ի՞նչ է ուրեմն պատճառը որ հիւանդները  
բժիշկներէն աւելի յառաջ կ'երթան կոր :

Պասճառը ան է որ հիւանդները կը քաջակեր-

ուին, եւ այս է որ քաջակերութիւն կը գտնայ, բնա-  
կանաբար յառաջ կ'երթայ :

**Ո՞վ** է ուրեմն այս երիտասարդները քաջակերու-  
թիւ :

Էսել մի տար ինձ, բարեկամ, որովհետեւ գե-  
ղեցիկ սեռին աչքին տղեղ պիտի երեւամ: Բարե-  
կամ, աղջիկները, չեմ ըսեր թէ ամէնը, չեմ ըսեր թէ  
մէկ բանին, երիտասարդներուն քթէն կը բռնեն կոր,  
գիշերները իրիկուըւէ մինչեւ առտու փողոցներու  
մէջ սպասել կուտան, երբեմն ալ անձրեւին ու ձիւ-  
նին, ցրտաշունչ հողմերու միջոցին կը դիմակաւորին  
ու թեթեւ պարահանդէսներ կ'երթան. երիտասարդ-  
ներն աղուոր երեւնալու համար բարակ հագուստներ  
կը հագնին, երեկոյթներու մէջ պարելու համար հո-  
գինին կուտան, կը ցատկեն, կը ցատկուտեն, վրայէն  
կըսկսին օղի խմել — սա օղին ինչպէս կը խմեն ըլ  
զիսեմ — հետեւեալ առտուն կըսկսին մօրերնուն  
ըսել, Մայրիկ, բան մը կըլլամ կոր, կը մսիմ կոր,  
կը տաքնամ կոր :

Ասոր վրայ բժշկին վազող վազողի կըլլան, բը-  
ժիշկները կուզան Աստուած հեռի ընէ, մէկ կողմէն  
լուծողական դեղ, միւս կողմէն տաքցուցիչ դեղ, միւս  
կողմէն պաղեցուցիչ դեղեր, վերջապէս ամէն կողմէն  
դեղ :

Քանի մը օր կ'անցնի եւ կը տեսնես որ հիւան-  
դը գժշկուեր է, եւ բժշկուելուն պէս շիտակ իր գոր-  
ծին կ'երթայ, բարեկամները տեսնելուն պէս,

— Բարեւ :

— Ասուն բարին, քանի մը օր է ո՞ւր էիր,  
— Ծանր հիւանդ էի:

— Այ զիտէ ինչ ոչինչ բան ըլլալու է, բռ ե-  
րիտասարդութիւնոյ, առոյց հասակր եւ ուժու անոնկ  
փոքրիկ հիւանդութեանց հիւանդութիւն կ'ըսէ, Ասո-  
ուածդ սիրես:

Երիտասարդն այս խելուն պէս կը քաջալերուի  
հարկու, ես ինչո՞ւ երիտասարդ ըլլամ ու փոքր հի-  
ւանդութիւններով զբաղիմ ըսելով մեծ հիւանդու-  
թիւններու կը ձեռնարկէ: Եթէ զիշերը ժամ մը կը  
մսէր, կսկսի չորս ժամ մսիլ, եթէ առաջ շաբաթը  
մէկ անգամ պարանանդէս կ'երթար նէ կսկսի երկու  
անգամ երթար, այս տարի ալ մեղքէս անդրէն 5  
դուրուշ է եղեր:

Ի՞ծի մտիկ ըրէք երիտասարդներ:

— Ոչ, ալ քեզի մտիկ ընկույզ ժամանակ չու-  
նինք, երիտասարդութիւնն այսուի ու ժամանել ար-  
լար հասկցա՞ր, Ծաղիկ ես ինչ ու զորութեանց պզային  
յօդուածներզ զրէ մեր զործին անուանութիւն, խրառ-  
ներդ ալ քեզի ըլլան դռն ալ

Երիտասարդներ, մտիկ ըրէք որ . . .

— Մտիկ չենք ըներ ըսինք, լմնուր այս յօդ-  
ուածդ, եւ ուրիշ բան զրէ:

— Բայց ես պատրաստ եմ քեզի խրառ տալու:

— Եղբայր, լմնուր այդ յօդուածդ ըսինք, ինչ  
խօսք շնասկցող մարդ ես եղեր:

— Շատ աղէկ, թէ որ Ծաղիկի բաժանորդ ես,  
եւ բաժանորդագինը վճարած չես նէ, վաղը ցրուիչը  
գալու ըլլայ նէ, ստակը տուր, կամ պիտի ծաղրիս  
եւ կամ ստակ պիտի ուզես:

Ուրեմն մտիկ ըրէք:

— Ոչ երիտասարդութիւնը բռ խաղալիքդ չէ,  
այս, պիտի պարենք ալ, պիտի երգենք ալ, պիտի  
ցատկենք ալ, պիտի պոռանք ալ, պարանանդէսնե-  
րու, երեկոյթներու եւ տուններու մէջ սիրահարու-  
թիւններ պիտի ընենք ալ, ըսելիք մնա՞ց:

— Այս, մնաց, ըսելիքս աս է որ հիւանդ կրյ-  
լանք կոր, զործերնէդ ես կը մնաք կոր, բասկնիզ  
կը պարպէք կոր, սիրեցէք, բայց մի մտիք ու հի-  
ւանդանար: Երբեմն չորս հինգ առևակ հիւանդու-  
թիւն մէկն կ'առնէք կոր:

— Մենք կը հիւանդանանք կոր նէ բժիշկները  
քաջալերելու համար կը հիւանդանանք կոր, ապուշ  
չենք այնչափը զիտենք, վերջացուր խօսք:

— Շատ աղէկ, թէ որ իրաւցնէ բաժանորդ ես,  
վաղը ստակը տուր, հէ՞:

— Բաժանորդ չեմ, բայց ընթերցողդ եմ:

— Ոնանկ է նէ Սերմը կարգալէդ վերջը բո-  
վինիդ մի տար որ ան ալ ուրիշ մը առնէ:

— Շատ աղէկ, բայց գուն ալ երիտասարդու-  
թեան վրայ կծու բաներ մի զրեր, որչափ ըլլայ նէ  
մենք ալ աղջիկներն ալ կը բարկանանք:

Ոնհոգ եղիք, բայց չմսիք:

## ՏԱՐԵՐՅԱ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ ՆՈՐ ԶԵՐԴԱՑԵԼՈՅ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԲԱՌԵՐՈՒ ՎՐԱՅ

1. Ամուսնութիւնը սիրելու (մէկ հոգի միայն) եւ  
միշտ սիրելու եւ ուզիդ չխօսելու արհեստն է:

2. Ամուսնութիւնը հարսնիքով կ'ըլլայ, հարսնիքը  
նշանառուքով, նշանառուքը խօսք-կապով՝ խօսքկապը սի-  
րահարութեամբ, սիրահարութիւնն ալ պատուհաննէ պա-  
տուհան, կամ զրոսավայրերը կամ ընկերութեանց մէջ  
եւ կամ նամակով կ'ըլլայ:

3. Ամուսնութեան մէջ գլխուորապէս երկու զիր-  
կայ, եւ են երկի ու կենիկ:

4. Այս երկու զիրերուն առաջինը ձայնաւոր կըսուի  
երկրողը բաղաձայն:

5. Երիկը ձայնաւոր է, որովհետեւ առանց կնկանը  
օգնութեան կրնայ ինքնիրմէ ձայն հանել, ինչպէս ես իմ  
տանս մէջ ուզածս կ'ընեմ, ինչպէս որ կը տեսնուի այս  
օրինակին մէջ կնիկ չկայ:

Եւ կնիկը բաղաձայն է, ինչու որ առանց էրկանը  
օգնութեան չկրնար ինքնիրմէ ձայն հանել ինչպէս, ես  
իմ տանս մէջ ուզածս կ'ընեմ, չկրնար իմաստ մը, խօսք մը  
արտազրել մինչեւ որ բաղաձայնը անոր օգնութեան չը  
համան:

7. Որչափ որ այս ձայնուորն կարենայ ինք իր  
գլխուն ձայն մը հանել, չկրնար իմաստ մը, խօսք մը  
արտազրել մինչեւ որ բաղաձայնը անոր օգնութեան չը  
համան:

8. Շատ անգամ էրէկը բասերուն ումոնց վերջը  
դրուած համբ Յ գրին պէս բնաւ չարտասանուիր, բնաւ  
ձայն չկրնար հանել:

9. Այս երկու զիրերը չատ անգամ ձայներնին կը  
փոխին եւ տարբեր կերպով կ'արտասանուին: Ասոնք  
սորվելու համար թէեւ ամուսնութեան երկարժամանակ-  
եայ փորձառութիւն պէտք է, բայց աշակերտաց դիւ-  
րութիւն մը տալու համար հոս քանի մը կանոններ կը  
դնենք:

Ա. Կնիկը ոուր ձայն մը կը հանէ երբ որ հարուստ  
ըլլայ:

9. Կնիկը համբ է երբոր տպեղ ու աղքատ ըլլայ :  
9. Երիկը բարձր ձայն կը հանէ երբոր գինով ըլլայ :

Դ. Երիկը բնաւ ձայն չհաներ երբոր անհոգ ըլլայ :

10. Երիկն ու կնիկն երբոր քովէ քով գան եւ երեկուքը մէկ ձայն հանեն երկարբառ կ'ըսուի :

11. Ամուսնութեան մէջ ութ տեսակ բառ կայ, որոնք մատուեի ամուսնութեան կլսուին, քերականական լիզուով, այս Մատուեի Ամուսնութեանը հետեւեալներն են :

Անուն :

Դերանուն :

Ածական (շատ կը գործածուի) :

Բայ :

Նախդիր :

Մակրայ :

Սիրտ :

Տնաւորութիւն :

Առջի վեց բառերը կը փոխուին, իսկ վերջի երկուքը չեն փոխուիր :

12. Անունը նոյն բանը չէ ամուսնութեան քերականութեանը մէջ ինչ որ է շիտակ խօսելու եւ գրելու քերականութեան մէջ :

Ամուսնութեան մէջ անունը ընդհանրապէս դոյութիւն չունեցող անձ մը կամ իր մը կը ցուցնէ, ինչպէս հաւատարիմուի, հրջանկութիւն եւլն :

13. Անունը երկու տեսակ է, յատուկ եւ հաւատակի :

14. Յատուկ անունը այնպիսի անձ մը կամ իր մը կը ցուցնէ, որ իր տեսակին մէջ մէկ հատ է. ինչպէս, հնագանդուի, հաւատարմուի, տնաւեսագիտունի եւլն :

15. Մասնաւոր անունը միեւնոյն տեսակէ շատ մը անձեր կամ իրեր կը ցուցընէ. ինչպէս, քծնող, սիրական, անհաւատարմութիւն եւլն :

16. Անունը երկու թիւ ունի, եզակի եւ յոդնակի :

17. Եզակին այն է որ անձ մը կամ իր մը միայն կը ցցունէ, ինչպէս, էրիկ, սէր, իսկ յոզնակին շատ մը բաներ կը ցուցնէ, ինչպէս էրիկներ, սէրեր եւայն :

18. Քերականութեան մէջ կը տեսնենք որ ընդհանրապէս ամէն գոյական քովը մակդիր մը առնելով յոգնակի կ'ըլլայ. Այս կանոնն կը հետեւի անկանոնը թէ ամէն մարդ քովը կնիկ մը առնելուն պէս յոգնակի կը լայ :

Գ. ԽԾԵԼԻՔ. Այս կանոնը հիմուած է սա խօսքին դրայ, անեցէի եւ բազմացրու :

19. Անուն կայ որ անյոգնական է, ինչպէս, մայրապետ, վարդապետ, եւլն Անուն ալ կայ որ անեղական է, ինչպէս նախանձունի եւն. Այս կանոնն ալ բացառութիւններ ունի :

20. Անունը պարագաներուն համեմատ կը փոխուի, եւ այս փոփոխման քերականական լեզուով հոլովումն ամուսնութեան կըսուի :

ՖԼԻԹ

Հարունակելի

## ՇԱՂԻՆԴԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Հիմա մեր ընթերցողք պիտի ըսեն թէ աս ալ նոր լուր մ'է որ գրեր է, ամենուն գիտած բանն է որ ամէն տարի ծնունդ չնորհաւորելու համար իրարու այցելութեան կ'երթան :

Աս տարին ուրիշ տարիներու պէս չէ դողոզութեան տարի է, անոր համար աս տարուան մօտան ալ չնորհաւորեի չերթան է եղեր, երթան ալ նէ, պարապ աեղը տանց գուռը չալելով ետ դառնալու է :

Աս տարի ամենէն աւելի չնորհաւորի պարագները ժամկոչները եւ սահմաներն էին :

— Ճանըմ կ'ըսէր միտարին մէկը աս ամէն առներն ալ պարապուե՞ր են, ինչ են եղեր, մէջը մարդ չի կայնէ, քիրաճի գտնենք ատոնց համար, մահալէնիւ ծնունդի պախչիչ չկրցանք ժողվիլ նէ պարէ քիրաճիի համար ապացիտ առնենք :

— Ասդիէն, սահիս մը ժամկոչին հանդիպելով կըսէ :

— Ալլանը սէլէրսէն պու կիւն նէ չէշիտ բասկարես աղը սիզէ, էօլէն վազթը քիլիսէլէ՞ մի կիթմիշէր նէ եափմըշար, էլլէրտէ ատամ հօգ :

— Թալէյիմիզպաէն պիզ տէ պու սէնէ սագալըդա կիրափք, զէչէր կ'զինմէյէ կիթմիշէր կը պատասխանէ. Ժամկոչը տմաշելով, բահանային մէկն ալ աղայ մը ետին ձգած տունէ տուն պարապելով օրհնութիւնը դռնէն կուտար կ'երթար :

Այս տարուան շատ տուները ներփակին չօրհնուած մնաց :

— Որին ալ աղան տունը չգտնուելուն համար քահանային փարան եաքը կը խրիենք ըսեր ճամբեր են :

Զատիկին ալ ասանկ չըլլալու համար չնորհաւորի պարագները մէկ օր մը առաջ երթալու որոշեր են :

## ԱԼԱՖՐԱՆԿԱՆ ՄԵՐ ՄԷՋ

Բ

(Հարունակութիւն 18 թիւէն)

Մայրիկ, այսօր սիրտս սաստիկ նեղութեան մէջ է :

— Ի՞նչ կ'ուզես աղջիկս :

— Ինչ է տս ամէն օր տունը նստելով ալ ձանձրացանք, քիչ մը շիտակ ճանրայ երթանք նէ չըլլար :

— Մեղայ, բանի գործի օր փողոցները ի՞նչ կայ :

— Չէ՞, պէտք է որ անպատճու այսօր երթանք աւելի աղէկ մնանք մնզի ժամանակ կ'անցնենք, անդիիններն ալ պիտի երթան եղեր, Երուանդիկնին եկած ըլլալուն համար :

— Քա աղջիկ, Երուանդիկ երուանդիկ կըսես, ինչ խօսքեր է քա ամօթ է :

— Մայրիկ իմ կամքս կրնա՞ս բռնաբարել, ես Երուանդիկէն չեմ կրնար անցնիլ:

— Քա աղջիկ բան մը կը լղրտաս կոր ամա, պիտես որ չեմ հասկնար, սա մէրամդինչ է նէ ան ըսէ ինծի:

— Մէրամս ի՞նչ պիտի ըլլայ, ես բարոյականութեան դէմ բնաւ բան մը գործած չեմ, միայն թէ իմ ապագայ երջանկութիւնս ես իմ ձեռքովս գանել ուզեցի գայ, եւ ընտրեցի իմ երջանկութիւնս հայթայթելու կարող մի անձ, եւ չեմ կարծեր որ զուք ալ բռնաբարելու միտում մ'ունենաք իմ ազատ կամացս ազատ ընտրութիւնը, ուստի րացէ ի բաց ահա կ'ըսեմ ձեզ թէ հիմա ալաֆրանկա է ես զայն պիտի առնում:

— Հէ՞ ինչ ըսիր . . . քա ամա մաքէս անցաւ քի քու լեզուիդ տակ բան մը կայ, եանի հարդ իմանայ չի կայ, բէտիլ բէտիլ կընէ քեզ:

— Ես հայր մայր չեմ ճանչնար, ես Երուանդիկը պիտի առնեմ, ինչ որ կուզէք ան ըրէք:

— Վայն ի վրաս, ես ալ խնդացի քի աղջիկս սանկ պիտուն է, նանկ խելացի է տէյի, հէմէն ի՞նչ ըսեմ, իճատ ընողին ճիշտ տակը մնայ ատ զպրատուն է ինչ խարախսատայ է, զահէր ատ կրապառնաները սովորեցաք քի մեր աստար տարուան նամուսը մէկ ստակի ընէք տէյի, իրարու հեա տա բաները խօրաթէիք, հա, ես ալ շաշխն շաշխն մտիկ կընէի, դուն ախջիկ տղայ, ելլես ինքնիրենդ էրիկ գտնես, զույ քար բերնիս, խասխաթի եղիր տէ նատէ վար, ալէմին առջին բէզիլ պէսնամ պիտի ընես, ոտքը կը կոտրեմ, հատթ ունի նէ թող մէյ մ'ալ հոս գայ, սավոնց նայէ հէլէ:

— Մայրիկ ես ինչ ես, խնդեցա՞ր ինչ եղար, կուզէք բռնութիւն բանեցնել բայց հիմա ալաֆրանկա է, այնպիսի բան չըլլար, միթէ գո՞ւք պիտի գտնէիք ինձ արժանաւոր ամուսին մը եւ որ գուցէ տղէտ ու անմիտ երիտասարդ մը որ զգացման եւ ալաֆրանկայի վրայ բնաւ զաղաբար չունի եւ չզիտէր թէ կինն ալ ընկերականութեան մէջ իրեն հաւասար մէկ անգամ մընէ, այս տեսակներէն չըր միթէ ձեր գտնելիքը մայրիկ, զիտցած եղէք որ եթէ իմ որոշած չըլլայ, մահն անգամ աչք առած եմ:

— Կիտի ութանմազ, հիմա ճղակառը կը հանեմ հաքեզ, քա մարդ մը չկայ սլոր հօրը խապար մը տանի, մարելիք եկաւ վրաս, քիչ մը ջուր տուէք տամիլայի պիտի բերէ իս:

— Աւա՛զ, որ ձեզ մայր եմ ըսեր, մինչեռ գուք հրեշէ մ'աւելի սսսկալի էք:

Մենք այս եղելութիւնը իմանալով իւր բոլոր ծշդութեամբը հրատարակելնէս վերջը սա միայն կը յաւելցընենք որ ալաֆրանկան մեզի դեռ շատ օրինակներ պիտի ցուցունէ:

## Գ

## Տան մը մէջ

Կոմիտաս աղա նէ գարար վէրտին, իշի պիթիրտին մի:

— Սուս ոլ պիրատէր, ո տէրտտէ իմ, կէօյա պու

կէճէ նշան կէթիրէճէք, նէ եափորմսա պիզիմ գըզը գանալըրամատըմ, շիմտիքի ճահիլէրէ ազլըմ էրմէյօր, ծղան տէրսէն օ տա պիր չէշիտ, ո հէր կէճէ լօքանուա կիալի եէմէյի եէտի մի նէրէյէ կիտէր ազլըմ էրմէզ, ծո՞ւր ամէն զիշեր կ'երթաս, տէտին մի, իշիմ վար տըր տէր, պրքարմ արթըգ, էօլէյիմ տէ գուրթուլայըգ:

— Քաբու տուր ճանըմ տո՞ւմայօր մը սընըզ:

— Աղապա, միւսիւ ժօրժ կէլտի:

— Պույուրուն միւսիւ ժօրժ:

— Պօնսուառ:

— Աղչամ խայր, էվլատ:

— Նէ եափոյօրսունուգ գայըն փէտէր, եագըշըր մը թուրունուգ բուռ լանուռ ըլ տիկո:

— Միւսիւ նասլըրնըզ, էյի մի սինիզ:

— Մէրսի պիէն, մա բարտօն, պու կիւն սէօզ պազը կէթիրէճէք իտիմ, ափ իտէրսինիզ, լաքին պիր սէպէտ օլտու տա... տօղրուառ փէք թէսիւֆ իթտիմ :

— Նէ օլտու քի:

— Ան գաելն բէտէր փէք թէսիւֆ իթտիմ:

— Պիր գազա մը օլտու:

— Ա՞ն պիլմէզպինիզ, նէ գատար թէսիւֆ իթտիմ:

— Պրոշ պուլամատըն մը:

— Պրօշու պուլտում, օթուզ լիրայա փազարլըգ իթտիմ, սըրա փարա վէրմէյէ կէտափ իսէ... լաքին չօգ թէսիւֆ իթտիմ :

— Նէ՞ քէսէնի մի գայս էթտին:

— Եօգ, փարասընը եարըն վէրէյիմ տէտիմ տէ գույումնու իթիսար էտիպ աէ վէրմէտի... լաքին չօգ թէսիւֆ իթտիմ :

— Նէ տէրսին կոմիտաս աղա:

— Թէսիւֆ իտէճէք հալ:

— Եյ սօնրա նէյէ գարար վէրախնիզ:

— Ֆիքրիմտէն տէտիմքի կիտէյիմ գայըն փէտէրտէն օթուզ լիրա ալայըմ տա փարայը վէրիպ պրոշը ալայըմ, պիր տէ տէտիմքի քի տահա նշանլամատան շիմտիտէն կիտիպ գայըն փէտէրտէն փարա իսթէրսիմ, միւնափէթ ալմազ, ալըր մը եա:

— Ալմազ եա:

— Պիր տէ տէտիմքի պի պէկէթի գայըն փէտէրիմ պունու իշիտիր աէ քէնտիլիինտէն չըգարըր վէրիր տէ իշի պիթիրիր, փագաթ գայըն փէտէրտէն փարա իսթէրսիմ, միւնափէթ պուն փարասընը վէրտին:

— Էօլէ եա, պէնիմ նէ պօրճում վար քի:

— Իշտէ մէսէիէ պու հալտէ իշին գալգայըմ պիր գայըն փէտէրէ կիտէյիմ տէ չու մատտէ իւզէրինէ պիր քօնսիւլթասիօն էտէյիմ տէտիմ:

— Ֆինա տէյիլ կոմիտաս աղա, քօնսիւլթասիօն տէտիմքի փէք ալա չէյ տիր:

— Պրոշա պէնզէ՞ր մի պարէ:

— Եօգ ճանըմ, քօնսիւլթասիօն տէտիմքի սանքի իքի իւչ քիշի եէրէ կէլիպ տէ պիր մատտէ իւզէրինէ էֆքեար պէյան էտիպ գարար վէրմէք տէմէք տիր:

— Կոմիտաս աղա տիւյիւնիւ շիմտի եափոյ պրօշու սօնլրա վէրսէ նա՞սը օլուր, ալաֆրանկատա էօյէ չէյլէր օլուր, օլլան տա ալաֆրանկա տըր, նէ տէրսին էլպէթ

սէն աէս պու եաշա զատար ալաֆրանկայա կիրտին :

Գուգում պիտատէր, պու նասըլ իշ, պունուն պիր սէօզ պաղը վէրմէյէ փարասը ևօդ իսէ նա՞սըլ էվ-լէնէծէք, պէնիմ աղլըմ էրմէյօր:

Գոզ պիր եանտան այազընը պասըյօր միւճէրրէտ իսթէրմ տէլի:

Տես ալաֆրանկան ինչ օյիններ բացեր է մեր խեղճ կոմիտաս ազային զլխուն:

## ՄՆՍԴԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՔ

Երանի՝ անոր որ Հիւանդանոցին մէճիտ մը տալով ազատած է իւր օձիքը :

Բայց ալ աւելի երանի այն մարդուն որ հետեւեալ էնարքը ի գործ դրաւ :

Անցեալ երկուշարժի օր մարդուն մէկը մեր տպարանը զալով 100 օրինակ տպելու համար զրութիւն մը տուաւ, եւ խնդրեց որ երեկոյին պատրաստ ըլլայ. խոստացանք, եւ կատարեցինք ալ :

Բայց թէ ինչ էր այդ տպուելիք զրութիւնը, ահա խնդրոյն հետաքրքրական մասը. Զափտի հաւատաք, շիտակը ըսելով, առջի բերան մենք ալ չհաւատացինք, եւ կատակ կարծեցինք. բայց ի վերջոյ տեսանք որ մարդը լրջօրէն կը խօսէր կոր, եւ մեր կասկածը ցրուելու համար կանխովճար մ'ալ ըրաւ.

Երեկոյին 100 օրինակ պատրաստուած էր, եւ յաճախորդը զալով ստակը վճարեց, օրինակները առաւ ու գնաց :

Բայց այդ գրութիւնը ի՞նչ էր. ահա կ'սկսիմ պատմել եզելութիւնը. Բայց պատմելէ առաջ աւելի լաւ չէ՞ր ըլլար որ այդ գրութեան պատճէնը գնէինք աստանոր (այսչափ զրաբարին հարկուարածնութիւն կայ) կ'սկսինք :

— Այս առտու Եկեղեցի գացի

— Առաւօտուն կանուխ ելայ

— Եկեղեցին բաւական բազմութիւն կար

— Քարոզը գէշ չէր :

— Այսօր օզը . . . է

— Բաւական տեղեր ունիմ երթալիք.

— Ներեցէք, մնաք բարով

— Շնորհակալ եմ.

Բան մը հասկցա՞ք. ինչպէս ըսինք, առջի բերան, ճիշդ մենք աղ պէս բան մը չհասկցանք. բայց խընդիրը պարզուեցաւ :

Մտիկ ըրէ՛ք :

Այդ մարդը ամեն տարի Մնունդի եւ Զատկի առթիւ, 70-80 լտուններ կ'այցելէ եղեր, եւ ուր որ երթայ միշտ միւնոյն հարցումները կ'ուղղուին եղեր իրեն. Այսպէս վերեւ զրուած պատճէնին կը հասկցուի թէ՝

Առաջին տողը պատասխան է Այս առտու Եկեղեցի գացի՞ք հարցման :

Երկրորդ տողը պատասխան է «Առաւօտուն կանո՞ւխ ելաք » հարցման .

Երրորդ տողը պատասխան է «Եկեղեցին բազմութիւն կա՞ր » հարցման .

Չորրորդ տողը պատասխան է «Քարոզը ինչպէ՞ս էր հարցման .

Հինգերրորդ տողը պատասխան կամ կրկնութիւն էր «Այսօր օդերնիս լաւ (կամ գէշ) » խօսքին. — Դիտեցիք հարկաւ թէ «Այսօր օզը » էն վերջ կէտեր զրուած են, որպէս զի այցելութեան օրը գէշ կամ յաւ բառերը ձեռքով գրուին, ըստ պարագային :

Վեցերրորդ տողը պատասխան է, «Հարկաւ շատ տեղեր ունիք երթալիք » հարցման .

Եօթերրորդ տողը պատասխան է, «Կ'աճապարէ՛ք », կեղծիքին :

Ութերրորդ տողը պատասխան է, «Յատուկ բարեւներ » քօմբիմանին :

Խեղճ մարդը այն աստիճան ձանձրացեր եւ զզուեր է որ նոր ճար մը գտեր է, վերեւ պատմածնուս պէս եւ փոխանակ տուներէն ներս մտնալու, իւր տպել տըւած թղթերէն մէկ մէկ հատ իւր այցետուման կցելով զուոր բացողին ձեռքը պիտի տայ եղեր :

Դեռ տեղեկութիւն մը չափնք իւր հնարքը գործադրած ըլլալու մասին. բայց վերջապէս իրաւունք տուինք. վասն զի այդ միօրինակ եւ ընդհանուր հարցումները տաղտկալիղարձած են, խօսակցութեան նոր նիւթեր չունի՞նք արդեօք : Է՛ օ՛ֆ :

Զատիկը գայ նէ նայինք աղ մարդը մէջտեղ պիտի ելնէ նորէն :

## ՄԱՂԻԿԻ Ա. ՎԵՑԱՄՍԵԱԿԸ

ՄԱՂԻԿ անցեալ թուով աւարտեց նոր նրջանի առաջին վեցամսեակը, յորում ջանք չխնայեց. իր սահմանին մէջ, հետզինտէ լաւագոյն պարունակութեամբ հանելի ըլլալ իր ընթերցողաց եւ անոնց համակրութեան արժանացաւ :

Իր բազմաթիւ ընթերցողաց, որոնք վեցամսեայ բաժանորդ զրուած էին, վերատին պիտի խրկուի թերթէն եւ կը յուսանք թէ պիտի յօժարին նորոգել իրենց բաժանորդագրութիւնը :

ՏՆՈՐԷՆՈՒԹԻՒՆ ՄԱՂԻԿ



## ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս. Ծննդեան առթիւ պաշտօնական ընդունելութիւնք տեղի ունեցան անցեալ Զորեքշարթի Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ :

— Յունաց Պատրիարքական փոխաւորդն հետն ունենալով Սինոդի Ա. քարտուղար վարդապետն իւ Սինոդի օրէնդրական ճիւղին խորհրդական վարդապետ մը, ինչպէս նաև Յունաց պատրիարքարանի Խառն ժողովոյ անդամներէն Տք. Սարաքիօթի պէջ, սեղանաւոր Գարա-Սուլա էֆ., հայագէտ Տիմիթրիոս Զօլադիտէս էֆ., եւ ուրիշներ Ազգային Պատրիարքարան գալով, Ա. Պատրիարք Հորհաւորեցին ի ղիմաց Յունաց Ա. Պատրիարքին իւ այս առթիւ սիրալիր խօսքեր փոխանակուեցան :

— Հայ. Հոռվամէտականաց Կ. Պատրիարք Գերերջ. Տ. Ագարեան Սրբազնի կողմէ. Խարքերդի Առաջն. Արքիարեան Աւետիս Եպիսկ., Սամանձեան Հ. Բառնաբաս Մ. Վ. եւ Շաշեան Պետրոս, Սինապեան Գրիգոր եւ Գարտաշեան Յովհաննէս էֆ.ք. Ազգային Պատրիարքարան եկան եւ Ս. Ծննդեան տօնի առթիւ Հորհաւորեցին Ս. Պատրիարքն եւ մէկ ժամկեն աւելի սիրալիր տեսակցութիւն մը ունեցան ընդունելութեան դահլիճին մէջ :

— Նոյնպէս Սաորուոց Պատր. Փոխաւորդն եւ Պուլկարաց Եկղարքին փոխանորդն Պատրիարքարան եկան ի Հորհաւորութիւն Ս. Ծննդեան :

— Ա. Պատրիարքն Հորհաւորական հեռագրեր ուղղեց յէջմիածին Ս. Հայրապետին եւ յերուսաղէմ Տ. Յառութիւն Պատրիարքին :

— Ֆրանսայի եւ Խատլիոյ դեսպանատանց Ա. Ժարդամաներն, Անգլիոյ դեսպանատան Բ. Ժարդամանն, ինչպէս նաև Ռուսիոյ դեսպանատան Բ. Ժարդամանն եւ Նեղուոց Յարեթիկ էֆ. Պատրիարքարան գալով Ս. Ծննդ. տօնին առթիւ Հորհաւորեցին Ս. Պատրիարք :

— Հաս նորագոյն տեղեկութեան, Ամենայն Հայոց Ս. Հայրապետը Ս. Ծննդեան տօնն անցուցած է Տփղիսի մէջ, ուր հասեր է մի քանի օր առաջ, եկեղեցական եւ քաղաքային պաշտօնէութեանց կողմէ պարա ու պատշատ յարգանոք ընդունուելով, Ն. Ս. Օծութիւն փոխադարձ այցելութիւն տուեր է Կաւկասիոյ կուստկալ Կալիցին իշխանին :

— Այլի տիկին Եղիսաբեթ Խարայէլեան Կրասինիկեան, որ այս օրերս մեռաւ Տփղիս, Ս. էջմիածնայ. վանքին կտակեր է 1000 րուպի, իր ծննդապայը Զանախչի զիւղի եկեղեցւոյն 1000 ր., Ամարասու վանքին 1000 ր. Շուշիի կուսանաց վանքին 300 ր. Շուշիի Մեղրեցունց եկեղեցւոյն 500 ր. Բաց ասար կտակաւ Պետական դրամատունը թողեր է 24000 ր. իրեւ անձեռնմխելի դրամագուխ, որոյ առկոսին կէսը Շուշիի քաղաքային խորհուրդը կրնայ գործածել քաղաքին պէտքերուն համար, իսկ մնացած կէսը կը յատկացնէ մի քանի գիւղերու կարեւոր պէտքերուն :

— Կաւկասիոյ կուսակալ Կալիցին իշխան եւ իր աիկին Դեկտ. 14) 26ին պարահանդէսի առիթով Հայոց կով-

կասեան Բարեգործական ընկերութեան նուիրեցին 100 ր:

— Պրադրիայա Պօմօծ (Եղայրական Օգնութիւն) անուն գրքին խմբագրութիւնը ծանոյց թէ հրատարակութեան հասոյթէն ցարդ 20,000 ր. զրկած է Թուքքիոյ աղքատ Հայերուն, ի ձեռն գետպահատուն եւ Պատրիարքարանի եւ 200 րուպի ալ յանձնած է Տփղիս գանձուող գաղթականներուն համար :

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

215. Եւրոպայի մէջ Զինական խնդիրն ա'լ աւելի նուազ ուշագրութիւն կը գրաւէ անցեալ շաբաթուան հետ բազդատմամբ: Հիմա առ հասարակ կ'ընդունուի թէ յետածուած է Զինական հող կորպելու կուրեր, որ ամիս մը առաջ վերահաս կը թուեր: Քանզի Գերմանիոյ արարքը կը բացատրուի լոկ իրեւ ածուիի կայանի մը վարձակալութիւն՝ մինչ Ֆրանսայի եւ Անգղիոյ արարքը կը մնայ դեռ ի շարս ակնկալուած այն դէպքերուն որ չին պատահիր: Ֆրանսական թերթերէն ոմանք Անգղիոյ հանդարտութիւնը կը մեկնեն սա ենթագրութեամբ թէ Գերմանիոյ հետ գոյացուցած է համաձայնութիւնն մը զոր աշխարհ յետոյ պիտի լսէ: Բայց տեղի չկայ տարտկուած թէ Անգղիոյ անմիջական քաղաքականութիւնն ի Զին ճշդիւ պարզուեցաւ Մր. Պալքուրի վերջին ատենախօսութեան մէջ: Նա ըսաւ թէ Անգղիա կ'ուղէ միայն պաշտպանել իւր արեւուրը, եւ ասով ոչ մէկուն կը վեսաէ, վասնզի ամէն նաւահանգիստներ զորս կը գործածէ՝ բաց են նաեւ բոլոր աշխարհի վաճառականութեան առջեւ: Հզոյին գրաւում կամ իւրացում բաղձալի չէ եւ իրապէս վեսատկար կ'ըլլայ Անգղիոյ, ըսաւ, եթէ զինուորական գործողութիւններու իրեւ խարիսխ ծառայիլու նպատակաւ տեղի չունենար: Անգղ. զինաւոր թերթերը մատնացոյց կ'ըսեն թէ Զինական խնդիրը կրնայ լուծուիլ Զինու պէտքերը լեցնելու նպատակաւ զրամ տալով եւ թէ, եթէ հարկ ըլլայ, Անգղիա պիտի չվարանի հետեւիլ իր շահերը պաշտպանելու խաղաղասիրական այս մեթոսին: Սակայն զիտել պէտք է թէ դեռ կատարուած չէ տամն եւ վեց միլիոն Անգղ. ոսկոյ փոխատութիւնը, որու համար անցեալ շաբթու ըսինք թէ Անգղիա որոշած է ընել Զինու: Քանի մը Ֆրանսական թերթեր կ'ըսեն թէ փոխատութիւնը պիտի ըլլայ Անգղիոյ եւ Գերմանիոյ կողմէ միասնաբար: Բայց յայտնի է թէ փոխատութիւնը դեռ պապագայի գործ է եւ դեռ նախնական բանակցութիւնները կը կատարի ին: Մայրագոյն Արեւելքի գործերուն համար անձկութեան պատճառ նկատաղ միակ բանը Քորէայի մէջ Ռուսական եւ Անգղիական շահերուն բախումն է: Բայց կ'երեւի թէ ատոր առջեւն առնուած է Ռուսիոյ, Անգղիոյ եւ Ճափոնի միջեւ Քորէայի նկատմամբ գոյացած համաձայնութեամբ մը: Ըստ այդմ իւրաքանչիւր կառավարութեան այն պաշտօնեաները որ Քորէայի Թագաւորին ծառայու-

եան մէջ են՝ իրենց արդի պաշտօնները պիտի պահեն փխաճակ արձակուելու ի նպաստ Ռուս պաշտօնեան ներու:

— Կըսուի թէ Զինական փոխառութեան համար Անգլիա ու Ֆրանսա համաձայնած են :

### ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Սզգային եւ օտար վարժարաններու մէջ դասախոս լինչպէս նաեւ առեւտրական հրապարակին վրայ երկորատեւ փորձառութիւն ունեցող պատուաւոր տնձ մը, Անգլիերէն եւ Գաղղիերէն թղթակցութեանց եւ Տամարակալութեան գործնական դասեր տալու պատրաստ է : Դիմել խմբագրատուն :

### ԾԵԾՈՒԱԾ ԶՈՒՏ ԽԱՀՈՒԵ

Թիթեղեայ տուփի մէջ. 250 կրմ. 3 $\frac{1}{2}$  դր.

» » » 125 » 1 $\frac{3}{4}$  »

Աղյատները մի մոռնավ

Թիօի առաջին տեսակէ սոյն խաճվէն առւփերու մէջ դրուած կը ծախուի ի նպաստ Ս. Յակոբայ Հիւանդանոցին, ուրկէ դոյցած հասոյթով հարիւրաւոր աղքամներ եւ անոք մանուկներ պիտի խնամուին, հետեւարար ամէն ոք այս խաճվէն գնելով, աժան եւ աղէկ տեսակ խաճվէ առած ըլլալէ զատ, աղքամներուն եւ հիւանդանոցին օգնութիւն մըն ալ ըրած պիտի ըլլայ :

Կեղրոնատեղմնէ, Ղայաթիա, ելնի ճամփ ճատէսի, Զինձիրլի խանին կից թիւ 70. ուր պէտք է զիմել, անկասկած ըլլալու համար :

Կը ծախուի նաեւ հետեւալ խաճութները եւ ուրիշ ծխավաճառներու եւ մանրավաճառներու քով :

Քերա, Շիտակ Ճամբան 136 եւ 54 թիւ շաքարավաճառ Սարիմ աղայի խանութները :

Բանկալթի, մանրավաճառ Աճէմեան Դրիգոր աղաի խաճութը :

Օրթաքէօյ, Քէթէնեան Վիչէն աղայի խանութը :

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Հ. Ե. Ա. Ա. Ն. Ո. Ց.

### ՊԱՐԶ ՕՐԱՑՈՅՑ 1898 ՏՄՐԻՑ

Յօրինեալ ՚ի Մարութէ Յովեկիանէ:

ՄԵՊԱԿԱՆՈՒԹԵԻՆ Ս. Փ. ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԱՊԵ

ՏՊԱԳՐՈՒԹԵԻՆ ՍԱՐԵԱՆ

(ՀԱՆԿԱՐ, ՊԱՐԱՍՏԱՆԵԱՆ ՏՊԱՐԵԱՆ)

ԳԻՆ 1 ԼՐՈՒԵ

Սուրբ Փրկչեան Ազգային Հիւանդանոցիս սեպհականութիւնն եղող սոյն Օրացոյցն այս տարի Ժամանակէն առաջ հրապարակ հանուած է ընտիր թղթի վրայ մաքուր տպագրութեամբ, որպէս զի Արգոյ Հասարակութիւնն մանաւանդ հեռաւար գաւառաց ազգայինք կարենան ժա-

մանակին պատրաստ ունենալ զայն : Ընդարձակն եւս քիչ օրէն պիտի հրատարակուի ճոխ պարունակութեամբ :

Հոգաբարձութիւնս մեծ յոյս ունի որ Պատուարժան Հասարակութեան ամեն մի անհատ նկատողութեան առնելով Հիւանդանոցիս նիւթական ներկայ կացութիւնն ու Պատուարի հազարէ աւելի ստուար թիւն, պիտի փափաքի նուէր մ'ըներ նոյն հասատութեան գոնէ մէկ մէկ հատ Օրացոյց գնելով :

Ազգայինք կարող են մէկ Օրացոյցի գնով նշանաւոր նպաստ մ'ըրած ըլլալ, երբ իւրաքանչիւր ոք փութալ այդ փոքրիկ նուէրն զանց չընել :

ՀԱՅԱ - ՔՈՎԱ - ՍԷՅԼԱՆ - Կ. ՊՈՒ.Ի.Ս

### ՄԵԾ ՎԱՃԱՌԱՍՈՒՆ ԹԷՅԻ

ԵԱՎ.ՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

Ճելալ պէյ իսանի դրան կից թիւ 10

Ամենէն ընդարձակ թէյի Վաճառատունն ի Կ.

Պոլիս, որ ճիւղեր ունի Օսմ:

Տէրութեան ամէն կողմերը:

Գաւառաց ապսպրանքները

փութով եւ խնամով կը գոր-

ծադրուին: Զինական, Հնդիկ,

Ճավայի եւ Աէյլանի ընտրե-

լագոյն թէյք, ուղղաւի բեր-

ուած հոս, թէյի նոր հունձքն

սկսած է գալ: Զգուշացէք

սոյն վաճառանիշին կեղծե-

րէն:

Փնտուել ԵԱՎ.ՐՈՒԵԱՆ Եւ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ սառո-

րագրութիւնը:

### Գ Ի Պ Ա Ն Ի

ՅՈՒՇԱՏԵՏՐ-ՕՐԱՑՈՅՑ

1898

Ի վաճառ ելած է հետեւեալ գներով :

Ընտիր լաթակազմ 2 $\frac{1}{2}$  գահեկան:

Նոյն սոկեզօծ ճատանով 4 գահեկան :

» չակոէն եւ մատիառով 7 $\frac{1}{2}$ :

» ընտիր թղթի վրայ տպուած 15:

Կեղրոնատեղիք՝ Սուլթան Համամ Պալտաւալեան գրա-  
տուն թիւ 14 եւ Զ. Թորոսեան զրատուն Վալիսէ խան  
թիւ 16:

Կը գանուի Բերա Հայ ծխավաճառաց քով, Կալաթա  
Վրոյրի եւ Խօմանի թղթավաճառանոցը, եւ Պօլոս  
գրավաճառաց քով :

# ԿՈՐՈՒՍԵԱԼ ԿՏԱԿԸ

ԳԼՈՒԽ Ժ.

## ՎԻՏԱԿԵ

Ստամբակը առանց ուշադրութիւն գրաւելու լոիկ մնջիկ կը հետեւեր մերթ ընդ մերթ տան դռներու եւ փողոցի անկիւններու մէջ պահուելով։ Վերջապէս Եէնի Չարչը զարիվայրն ենելով, տան առջեւ հասան։ Տիմիթրօ իւր չորս կողմը ակնարկ մը պարտցուց, նոյն միջոցին ոչ ոք կար փողոցին մէջ։ այն ատեն գրան զանդակին միսակը կոխեց։ անմիջապէս դուռը բացուելով, մեր երկու սիկարեանները ներս մտան ու դուռը զոցեցին։

Գուլա անոնց դրան առջին համակենուն՝ գուշակելով որ վերջին անգամ փողոցը պիտի զննեն, աճապարած, տունէն քիչ մը վար գտնուած փողոցին մէջ պահուած էր։

Երբ դրան գոցուելուն ձայնը առաւ, պահուած տեղէն ենելով գնաց տունը վերչն վար զննել սկսաւ. տունը թիւ չունէր բայց այդ անպատճութիւնը կարեւորութիւն չունէր, պէտք էր հասկնալ թէ իւր հետազոտած մարդուն բուն բնակարանը հոն էր։ Ստամբակը զլուխը քերելով միջոց մը խորհած պահուն, տան վերի յարկէն պատուհան մը բացուելով բաւական բարեդէմ կին մը Գուլան ձայնեց։

Գուլա ընդուս վեր նայելով հարցուց։

— Ի՞նչ կուզես։

— Տղաս, սա վերի անկիւնի մսավաճառին ըսէիր որ չորս կտոր կողիկ զբկէ, քեզի տասնոց մը կուտամ։

— Զեմ կրնար, որովհետեւ հիմայ ներս մտնող պարոններուն կ'ըսպասեմ որպէս զի մինջեւ կամուրջ պայուսակը ես տանիմ։

— Սա երրորդ յարկին վարձւորը, անի մինչեւ որ պայուսակը շոկէ դու քսան անգամ մսավաճառին կը բնա երթալ դալ։

— Այդ տունը թիւ չունի, եթէ մսավաճառը ուր քերելիքը հարցնելու ըլլայ ի՞նչ ըսեմ։

— Մատամին տունը ըսէ ան կը հասկընայ։

— Հաւ ուրեմն, չուտ ըրէ տասնոցը վար նետէ։

կինը պատուհանէն տասնոց մը նետեց, ստամբակը գետնէն ստաւ առաւ ու վազելով մեկնեցաւ. ճամբան մտովի կ'ըսէր, հիմայ որ պէտք եղած տեղեկութիւններն առի, երթամ Հրեայ սեղանաւորս գտնեմ։

Մոտվաճառին կողիները ակսաքելէ յետոյ, Բերայի մեծ պողոտայէն դէպ ի Ղալաթիա իշխալու պահուն, մէկէն ի մէկ ըսաւ։

— Դեռ ժամանակ ունիմ սեղանաւորիս երթալու,

քանի որ ճամբուս վրայ է, անգամ մը տեսնեմ թէ Պէտակած է։

Նոյն հետայն թէքեկի դրան վերի կողմի բլիթավաճառին խանութին առջեւ բոկոտն տղեկ մը տեսաւ որն որ լաթի կտորի մը մէջ, ափերովվը աւելցուկ բլիթի կը տորուանքներ կը լեցնէր։

— Հէ՛յ Տիտո գոչեց կերեւի որ խնջոյք կայ այսօր։ Տիտո մականուաննեալ տղեկը գլուխը դարձնելով ըստ։

— Վայ, դու ես Գուլա, այսպէս ո՞ւր կերթաս։ Պետօն գտնելու։

— Զուր տեղը պիտի հոգնիս, երկու օրէ ի վեր ծակը թափուր է, ուր են գացեր չեմ գիտեր, պանդոկներու մուշակները իր տեղը ես կը ներկեմ կոր։

— Վայ պաշտպաննեալն ալ հոս չէ։

— Ոչ, միատեղ գացեր են, եւ ուր երթալնին Պիւլպիւլին անգամ չեն ըսեր։

— Հոդ չէ, անշուշտ պիտի գան այն ատեն կը հասկընանք ուր գացած ըլլալնին. գրապաննիդ ինչ վիճակի մէջ են . . .

— Են, մի հարցներ, թոքատապէ խիստ նիհարցած կը տառապին, չուզեցի իրենց ձանձրոյթ տալ, ուստի բլիթի կտորուանքներով նախաճաշ պիտի ընեմ։

— Այդ փշանքներուն ստակ չե՞ս վճարեր։

— Ոչ, փոխարէն չուր կը կրեմ։

— Առ սըմի ըսաւ Գուլա քառառուն բարանոց մը տալով, եթէ վազն ալ Պէտօն չիպայ եկոյ գտիր զիս . . . քայուիլ պէտք չէ, առ սըմի կ'ըսեմ։

Տիտո գահեկանը առաւ եւ Գուլա հապճեպ քայլերով գէպ ի Ղալաթիա իւր ճամբան շարունակել սկսաւ։ Նոյն օրը ճշշդ կէս օրին, Սուչօ Կիրգա Արօն Նիսիմի գրասենեակը ներկայացաւ, սեղանաւորը անմիջապէս ուժի ենելով մեծ պատուով ընդունեց։

— Ի՞նչ լուր հարցուց Սուչօ Կիրգա, աթոռի մը վրայ նստելով։

— Երկու ժամ կայ, մեր մարդը գալով չէքին ըստակը առաւ։

— Դիտեմ այդ, միայն թէ ուր բնակիլը կրցի՞ր հասկնալ։

իրինկուն չիղած պիտի իմանանք ասկէ մեկնելուն փողոցի ստամբակ մը հետեւեցաւ իրեն, ուր գացած ըլլալը պիտի գայ իմաց տալ մեզ։

— Զե՞ս կարծեր որ մեր մարդը գուշակելով որ զինքը կը լրտեսին, պատրէ քու ստամբակդ։

Շարունակելի

Արտօնակեր Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

ՅՊԱԳՅՈՒԹԻՒՆ ՍԱՐԵԱՆ

(Նախկին ՊԱՐԱՍԼԵՍԱՆ Ցպարան)

Կ. Գոլիս, ՍԱՐԵԱՆ Համամ 14.